ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/26-1

ք. Երևան «30» «12» 2019թ.

ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Արտակ Ղազարյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և, «Դերձակ» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն՝ Լ. Գրիգորյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 54 684 854,8 (հիսունչորս միլիոն վեց հարյուր ութսունչորս հազար ութ հարյուր հիսունչորս ամբողջ ութ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը և հավելվածները կազմված են 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն ք. Երևան, Արշակունյաց-63 ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011175016 ՀՎՀՀ 02204739 ՔԿ ծառայություն՝ Ա.Ղազարյան ---------- /ստորագրություն/ Կ.Տ	**«Դերձակ» ՍՊԸ** ք. Երևան, .Ավան, Քուչակ 16/2, Հ/Հ 1930048861340100, «.Կոնվերսբանկ..» ՓԲԸ, ՀՎՀՀ 00885285, Հեռ. 010-62-39-11, E-mail: derzak2013@mail.ru ---------- /ստորագրություն/ Կ.Տ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ապրանքի									մատակարարման		
հերթական համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
1	18441100/5	Կիսաբրդյա գլխարկ	«Դերձակ» ՍՊԸ ՀՀ	Գլխարկը կանաչ գույնի կիսաբրդյա կտորից է՝ սև լաքապատ հովարով: Գլխարկաբոլորքի վրա երկու ոսկեգույն կոճակով ամրացվում է ոսկեզօծ հյուսվածքով զարդապարան: Գլխարկաբոլորքի վերևի և գագաթի միացման տեղով անցնում է 2 մմ լայնքով եզրաքուղ՝ կարմիր մահուդից: Գլխարկաբոլորքի և գագաթի կենտրոնական մասում ամրացվում է մեծ գլխարկանշան (Նկար՝ 1): Գլխարկի գագաթային մասում՝ ներսի կողմից հարմարեցված գրպանիկում, տեղադրվում է պոլիէթիլենային գլխարկի քողարկիչ՝ եզրերը էլաստիկ:	հատ	5798,82	1971598,8	340	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ ք. Երևան, Արշակունյաց 2	340	2019թ. 4-րդ եռամսյակ
2	18441100/6	Ականջակալներով ձմեռային գլխարկ՝ բնական կարակուլից	«Դերձակ» ՍՊԸ ՀՀ	Գլխարկը բաղկացած է թասակից, ականջակալներից, ճակատային մասից և լաքապատ հովարից: Ականջակալները և ճակատային մասը բնական կարակուլից են, իսկ թասակը՝ կանաչ գույնի 320-350 գր 1մ2 մակերեսային խտությամբ կիսաբրդյա գործվածքից: Գլխարկի ճակատային մասում ամրացվում է փոքր գլխարկանշան (Նկար՝ 2):	հատ	42000	840000	20	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ ք. Երևան, Արշակունյաց 2	20	2019թ. 4-րդ եռամսյակ
3	18441100/7	Ականջակալներով ձմեռային գլխարկ	«Դերձակ» ՍՊԸ ՀՀ	Գլխարկը բաղկացած է թասակից, ականջակալներից, ճակատային մասից և լաքապատ հովարից: Ականջակալները և ճակատային մասը մոխրագույն մորթուց է, 750-780 գրամ 1մ2 մակերեսային խտությամբ՝ մորթախավով, իսկ թասակը՝ կանաչ	հատ	6600	1980000	300	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ ք. Երևան, Արշակունյաց 2	300	2019թ. 4-րդ եռամսյակ

				գույնի 320-350 գր 1մ2 մակերեսային խտությամբ կիսաբրդյա գործվածքից: Գլխարկի ճակատային մասում ամրացվում է փոքր գլխարկանշան (Նկար՝ 2):							
4	18441140/2	Ձմեռային պիլոտկա՝ բնական կարակուլից	«Դերձակ» ՍՊԸ ՀՀ	Պիլոտկան դիմացը, հետնամասը և կողքերը բնական կարակուլից: Գլխարկի ճակատային մասում ամրացվում է փոքր գլխարկանշան (Նկար՝ 2):	հատ	39000	156000	4	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ ք. Երևան, Արշակունյաց 2	4	2019թ. 4-րդ եռամսյակ
5	18441140/3	Ձմեռային պիլոտկա	«Դերձակ» ՍՊԸ ՀՀ	Պիլոտկան դիմացը, հետնամասը և կողքերը մոխրագույն մորթուց են 750-780 գրամ 1մ2 մակերեսային խտությամբ՝ մորթախավով: Գլխարկի ճակատային մասում ամրացվում է փոքր գլխարկանշան (Նկար՝ 2):	հատ	6000	300000	50	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ ք. Երևան, Արշակունյաց 2	50	2019թ. 4-րդ եռամսյակ
6	18441160/1	Կեպի	«Դերձակ» ՍՊԸ ՀՀ	Կեպին կանաչ գույնի կտորից է՝ եզրաքուղով և հովարով: Թասակը շրջանաձև է: Փոքր գլխարկանշանն ամրացվում է ճակատային մասում (Նկար՝ 2):	հատ	2400	720000	300	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ ք. Երևան, Արշակունյաց 2	300	2019թ. 4-րդ եռամսյակ
7	18441140/4	Պիլոտկա	«Դերձակ» ՍՊԸ ՀՀ	Պիլոտկան կանաչ գույնի կտորից է՝ կարմիր մահուդե եզրաքուղով և փոքր գլխարկանշանով (Նկար՝ 2):	հատ	2400	84000	35	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ ք. Երևան, Արշակունյաց 2	35	2019թ. 4-րդ եռամսյակ
8	18211100/4	Ձմեռային կիսաբրդյա վերարկու, կարակուլե օձիքով	«Դերձակ» ՍՊԸ ՀՀ	Վերարկուն կանաչ գույնի, երանգը՝ կանաչ՝ փշատերև կիսաբրդյա կտորից է: Կտորի բաղադրությունը՝ 75% բուրդ, 25% պոլիէստեր, կտորի խտությունը՝ 300-330 գրամ մ2: Վերարկուն կազմված է լանջափեշերից, թիկնամասից, թևքերից և կարակուլե բնական մորթուց հանովի օձիքից: Վերարկուի առաջամասը, թիկունքը և թևերն ամբողջությամբ մշակվում են սինթեպոնով, որը մգդակված է աստառի հետ շեղանկյուն (փախլավաձև) հյուսքով: Վերարկուն	հատ	60000	1200000	20	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ ք. Երևան, Արշակունյաց 2	20	2019թ. 4-րդ եռամսյակ

				Կոճկվում է կափույրով ծածկվող շղթայով: Լանջափեշերի վրա՝ վերևից ուղղահայաց վրադիր գրպաններ: Գրպանների կափույրները կոճկվում են կպչունակներով: Կողային գրպանները՝ շեղակի կտրվածքով, շղթայով կոճկվող: Օձիքը՝ ծալովի: Ուսադիրների շրջանում՝ կպչունակով ամրակներ: Առջևի ձախ գրպանի վերևի մասում ասեղնագործվում են «ՔԿԾ» տառերը՝ քրեակատարողական ծառայության պետի տեղակալների համազգեստին՝ աջ գրպանի վերևի մասում՝ վերջինիս անվան, հայրանվան սկզբնատառերը և ազգանունը: Վերարկուի հետ տրվում են նաև ուսադիրները: Հանովի ուսադիրներն ուղղանկյուն են, զուգահեռ կողմերով, երկարությունը 90 մմ է, լայնությունը՝ 50 մմ, ստորին և վերին եզրերը 2,5 մմ լայնությամբ մուգ կանաչ գույնի ասեղնագործված: ՈՒսադիրները ստորին հատվածում ասեղնագործվում են երկու ոսկեգույն 4 մմ լայնությամբ մակաշերտեր: Ուսադիրները պատրաստվում են վերարկուի կտորից:							
9	18211100/5	Ձմեռային կիսաբրդյա վերարկու	«Դերձակ» ՍՊԸ ՀՀ	Վերարկուն կանաչ գույնի, երանգը՝ □կանաչ՝ փշատերև□ կիսաբրդյա կտորից է: Կտորի բաղադրությունը՝ 75% բուրդ, 25% պոլիէստեր, կտորի խտությունը՝ 300-330 գրամ մ2: Վերարկուն կազմված է լանջափեշերից, թիկնամասից, թևքերից և մոխրագույն մորթե հանովի օձիքից: Վերարկուի առաջամասը, թիկունքը և թևերն ամբողջությամբ մշակվում են սինթեպոնով, որը մգդակված է աստառի հետ շեղանկյուն (փախլավաձև) հյուսքով: Վերարկուն կոճկվում է կափույրով ծածկվող շղթայով: Լանջափեշերի վրա՝ վերևից ուղղահայաց վրադիր գրպաններ: Գրպանների կափույրները կոճկվում են կպչունակներով: Կողային գրպանները՝ շեղակի կտրվածքով, շղթայով կոճկվող: Օձիքը՝ ծալովի: Ուսադիրների շրջանում՝ կպչունակով ամրակներ:	հատ	24000	7200000	300	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ ք. Երևան, Արշակունյաց 2	300	2019թ. 4-րդ եռամսյակ

				Առջևի ձախ գրպանի վերևի մասում ասեղնագործվում են «ՔԿԾ» տառերը: Ընդհանուր քանակի 15%-ի գոտկատեղի հատվածում՝ ճարմանդով գոտի և կամրջակներ: Վերարկուի հետ տրվում են նաև ուսադիրները՝ 20 % ավել քանակով: Հանովի ուսադիրներն ուղղանկյուն են, զուգահեռ կողմերով, երկարությունը 90 մմ է, լայնությունը՝ 50 մմ, ստորին և վերին եզրերը 2,5 մմ լայնությամբ մուգ կանաչ գույնի ասեղնագործված: Ուսադիրները ստորին հատվածում ասեղնագործվում են երկու կամ մեկ ոսկեգույն, 4 մմ լայնությամբ մակաշերտեր, որոնց քանակներն, ըստ տեսակի, կտրամադրվի Գնորդի կողմից: Ուսադիրները պատրաստվում են վերարկուի կտորից:							
10	18211100/6	Զմեռային վերարկու գունաքողարկված	«Դերձակ» ՍՊԸ ՀՀ	Վերարկուն գունաքողարկված գույնի, ջրակայուն, կիսաբամբակյա կտորից է: Կտորի բաղադրությունը՝ 51% բամբակ, 49% պոլիէստեր, կտորի խտությունը՝ 220-230 գրամ մ² (±3%): Վերարկուն կազմված է լանջափեշերից, թիկնամասից, թևքերից և մորթե հանովի օձիքից: Վերարկուի առաջամասը, թիկունքը և թևերն ամբողջությամբ մշակվում են սինթեպոնով, որը մգդակված է աստառի հետ շեղանկյուն (փախլավածև) հյուսքով: Վերարկուն կոճկվում է կափույրով ծածկվող շղթայով: Լանջափեշերի վրա՝ վերևից ուղղահայաց վրադիր գրպաններ: Գրպանների կափույրները կոճկվում են կպչունակներով: Կողային գրպանները՝ շեղակի կտրվածքով, շղթայով կոճկվող: Օձիքը՝ ծալովի: Ուսադիրների շրջանում՝ կպչունակով ամրակներ: Առջևի ձախ գրպանի վերևի մասում ասեղնագործվում են «ՔԿԾ» տառերը: Ընդհանուր քանակի 15%-ի գոտկատեղի հատվածում՝ ճարմանդով գոտի և կամրջակներ: Վերարկուի հետ տրվում են նաև ուսադիրները՝ 20 % ավել քանակով: Հանովի ուսադիրներն	հատ	13500	2700000	200	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ ք. Երևան, Արշակունյաց 2	200	2019թ. 4-րդ եռամսյակ

				ուղղանկյուն են, զուգահեռ կողմերով, երկարությունը 90 մմ է, լայնությունը՝ 50 մմ, ստորին և վերին եզրերը 2,5 մմ լայնությամբ մուգ կանաչ գույնի ասեղնագործված: Ուսադիրները պատրաստվում են վերարկուի կտորից:							
11	18231410/1	Կիտել և ազատթող փողքերով տաբատ	«Դերձակ» ՍՊԸ ՀՀ	Կիտելը կանաչ գույնի, երանգը՝ Ոկանաչ՝ փշատերև կիսաբրդյա կտորից է, մետաքսե աստառով: Կտորի բաղադրությունը՝ 44% բուրդ, 54% պոլիէստեր, 2% լայկրա, կտորի խտությունը՝ 240-260 գրամ մ2: Լանջափեշերը կոճկվում են երեք ոսկեգույն կոճակով: Ունի կողային երկու ներկարված գրպան՝ կափույրներով, մեկ ծոցագրպան: Տաբատը նույն կիտելի կտորից է՝ կողային երկու ներկարված գրպանով, հետևի մասում ունի մեկ գրպան՝ կափույրով: Տաբատն առջևի մասում կոճկվում է կայծակաճարմանդով: Տաբատը կողքերին ունի մեկ նեղ (2 մմ) կարմիր գունաժապավեն:	հատ	28002	7000500	250	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ ք. Երևան, Արշակունյաց 2	250	2019թ. 4-րդ եռամսյակ
12	18231210/1	Կիտել և կիսաշրջազգեստ	«Դերձակ» ՍՊԸ ՀՀ	Կիտելը կանաչ գույնի, երանգը՝ Ոկանաչ՝ փշատերև կիսաբրդյա կտորից է, մետաքսե աստառով: Կտորի բաղադրությունը՝ 44% բուրդ, 54% պոլիէստեր, 2% լայկրա, կտորի խտությունը՝ 240-260 գրամ մ2: Լանջափեշերը կոճկվում են երեք ոսկեգույն կոճակով: Ունի կողային երկու ներկարված գրպան՝ կափույրներով, մեկ ծոցագրպան: Կիսաշրջազգեստը նույն կիտելի կտորից է, երկարությունը՝ ծնկին հավասար, հետևի վերին միջնամասում ունի կայծակաճարմանդ, իսկ հետևի ստորին մասում ունի 10 սմ երկարությամբ կտրվածք:	հատ	27000	540000	20	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ ք. Երևան, Արշակունյաց 2	20	2019թ. 4-րդ եռամսյակ
13	18231910/1	Կիսաբրդյա բաճկոն և ազատթող փողքերով տաբատ	«Դերձակ» ՍՊԸ ՀՀ	Բաճկոնը կանաչ գույնի, երանգը՝ Ոկանաչ՝ փշատերև կիսաբրդյա կտորից է, մետաքսե աստառով: Կտորի բաղադրությունը՝ 44% բուրդ, 54% պոլիէստեր, 2% լայկրա, կտորի խտությունը՝ 240-260 գրամ մ2: Բաճկոնը բաղկացած է մեջքից, օձիքից, թևքերից և լանջափեշերից, որոնք	հատ	24499,99	9799996	400	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ ք. Երևան, Արշակունյաց 2	400	2019թ. 4-րդ եռամսյակ

				միացվում են շղթայով: Բաճկոնը առաջամասից կրկնակարվում է սոսնձապատ գործվածքով: Առանձին հատվածները (գրպանների կափույրներ, օձիք) նույնպես կրկնակարվում են սոսնձապատ գործվածքով: Կրծքամասի երկու կողմերում տեղադրված են կպչունակով կոճկվող, ուղղանկյուն կափույրով արտաքին գրպաններ: Փեշամասում տեղադրված են ներկարված շղթայով կոճկվող երկու թեք գրպաններ: Մեջքը՝ վերին կտրվածքով, թևքերը՝ միակար թեզանիքներով և կտրվածքով: Թեզանիքները կոճկվում են երկու մետաղական ոսկեգույն կոճակով: Բաճկոնը գոտիով է, կողքերից՝ էլաստիկ ժապավենով ձգված: Ուսադիրների շրջանում՝ ոսկեգույն կոճակով ամրակներ: Առջևի ձախ գրպանի վերևի մասում ասեղնագործվում են «ՔԿԾ» տառերը՝ քրեակատարողական ծառայության պետի տեղակալների համազգեստին՝ աջ գրպանի վերևի մասում՝ վերջինիս անվան, հայրանվան սկզբնատառերը և ազգանունը: Տաբատը նույն բաճկոնի կտորից է՝ կողային երկու ներկարված գրպանով, հետևի մասում ունի մեկ գրպան՝ կափույրով: Տաբատն առջևի մասում կոճկվում է կայծակաճարմանդով: Տաբատը կողքերին ունի մեկ նեղ (2 մմ) կարմիր գունաժապավեն:							
14	18221600/8	Դաշտային կոստյում՝ կեպիով, կիսաբամբակյա, գունաքողարկված, անջրանցիկ կտորից	«Դերձակ» ՍՊԸ ՀՀ	Բաճկոնը կիսաբամբակյա, գունաքողարկված անջրանցիկ կտորից է, աստառը՝ մետաքսյա: Կտորի բաղադրությունը 52% պոլիէստեր, 48% բամբակ, կտորի խտությունը՝ 210-230 գրամ մ2, իսկ երանգը՝ ՆԱՏՈ: Բաճկոնը կոճկվում է կափույրով ծածկվող կայծակաճարմանդով: Կրծքամասում ունի երկու վրադիր գրպան՝ կափույրներով և կպչունակներով: Ունի նաև երկու ներկարված կողային գրպան: Առջևի ձախ գրպանի վերևի մասում ասեղնագործվում են «ՔԿԾ»	հատ	10800	7560000	700	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ ք. Երևան, Արշակունյաց 2	700	2019թ. 4-րդ եռամսյակ

				տառերը՝ քրեակատարողական ծառայության պետի տեղակալների համազգեստին՝ աջ գրպանի վերևի մասում՝ վերջինիս անվան, հայրանվան սկզբնատառերը և ազգանունը: Ուսադիրների ամրակները կպչունակներով և գունաքողարկված կտորից են: Տաբատն նույն բաճկոնի կտորից է, ուղիղ կարվածքով է՝ երկու կողային ներկարված գրպանով, հետևի մասում՝ մեկ գրպանով, առջևի մասում տեղադրված է կայծակաճարմանդ, աստառը՝ մետաքսյա: Կեպին նույն կտորից է՝ հովարով: Թասակը շրջանաձև է: Փոքր գլխարկանշանն ամրացվում է ճակատային մասում (Նկար՝ 3):							
15	18221600/9	Զմեռային դաշտային կոստյում հանովի կարակուլե օձիքով և կայծակաճարմանդով քողարկված գլխանոցով	«Դերձակ» ՍՊԸ ՀՀ	Կոստյումը գունաքողարկված անջրանցիկ կտորից է, աստառը՝ մետաքսյա: Կտորի խտությունը՝ 240-260 գրամ մ2, իսկ երանգը՝ ՆԱՏՕ: Բաճկոնը և տաբատը լցոնված են սինթեպոնով: Բաճկոնը կոճկվում է կափույրով ծածկվող կայծակաճարմանդով, կրծքամասում ունի երկու ներկարված գրպան՝ կափույրներով և կպչունակներով: Ունի երկու կողային ներկարված գրպան: Առջևի ձախ գրպանի վերևի մասում ասեղնագործվում են «ՔԿԾ» տառերը՝ քրեակատարողական ծառայության պետի տեղակալների համազգեստին՝ աջ գրպանի վերևի մասում՝ վերջինիս անվան, հայրանվան սկզբնատառերը և ազգանունը: Ուսադիրների ամրակները կպչունակներով և գունաքողարկված կտորից են: Հանովի օձիքը բնական կարակուլից և կայծակաճարմանդով քողարկված գլխանոցով: Տաբատի առջևի մասը կոճկվում է կայծակաճարմանդով: Ունի երկու կողային ներկարված գրպան:	հատ	54000	1080000	20	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ ք. Երևան, Արշակունյաց 2	20	2019թ. 4-րդ եռամսյակ
16	18221600/10	Զմեռային դաշտային կոստյում հանովի մորթե	«Դերձակ» ՍՊԸ ՀՀ	Կոստյումը գունաքողարկված անջրանցիկ կտորից է, աստառը՝ մետաքսյա: Կտորի խտությունը՝ 240-260 գրամ մ2, իսկ երանգը՝ ՆԱՏՕ:	հատ	18000	1800000	100	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ	100	2019թ. 4-րդ եռամսյակ

		օձիքով և կայծակաճարմանդով քողարկված գլխանոցով		Բաճկոնը և տաբատը լցոնված են սինթեպոնով: Բաճկոնը կոճկվում է կափույրով ծածկվող կայծակաճարմանդով, կրծքամասում ունի երկու ներկարված գրպան՝ կափույրներով և կպչունակներով: Ունի երկու կողային ներկարված գրպան: Առջևի ձախ գրպանի վերևի մասում ասեղնագործվում են «ՔԿԾ» տառերը: Ուսադիրների ամրակները կպչունակներով և գունաքողարկված կտորից են: Հանովի օձիքը մորթուց և կայծակաճարմանդով քողարկված գլխանոցով: Տաբատի առջևի մասը կոճկվում է կայծակաճարմանդով: Ունի երկու կողային ներկարված գրպան:					ք. Երևան, Արշակունյաց 2		
17	18211300/2	Թիկնոց- ուսնոց	«Դերձակ» ՍՊԸ ՀՀ	Թիկնոց - ուսնոցը կանաչ գույնի անջրանցիկ կտորից է՝ ձեռքերի համար նախատեսված երկու կողային բացվածքով և գլխանոցով:	հատ	8880	1776000	200	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ ք. Երևան, Արշակունյաց 2	200	2019թ. 4-րդ եռամսյակ
18	18331200/4	Տոնական վերնաշապիկ	«Դերձակ» ՍՊԸ ՀՀ	Վերնաշապիկը սպիտակ կիսաբամբակյա կտորից է՝ խտությունը՝ 190-220 գրամ մ2, ծալովի օձիքով և երկարաթև: Ունի սպիտակ կոճակով և կափույրով շերտակարված վրադիր գրպաններ, գոտի՝ կողքերից էլաստիկ ժապավենով ձգված, կոճկվում է սպիտակ 8 կոճակով, ձախ կտրվածքը՝ շերտակարով: Ուսերին տեղադրված են կոճակով ամրացվող ուսադիրների 2 կամրջակ և 3 փակօղակ, թևքերը՝ երկար: Առջևի ձախ գրպանի վերևի մասում ասեղնագործվում են «ՔԿԾ» տառերը՝ քրեակատարողական ծառայության պետի տեղակալների համազգեստին՝ աջ գրպանի վերևի մասում՝ վերջինիս անվան, հայրանվան սկզբնատառերը և ազգանունը:	հատ	3798	1899000	500	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ ք. Երևան, Արշակունյաց 2	500	2019թ. 4-րդ եռամսյակ
19	18331200/5	Երկարաթև վերնաշապիկ	«Դերձակ» ՍՊԸ ՀՀ	Վերնաշապիկը բաց կանաչ կիսաբամբակյա կտորից է՝ խտությունը՝ 190-220 գրամ մ2, ծալովի օձիքով և երկարաթև: Ունի կանաչ	հատ	3798	3798000	1000	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ	1000	2019թ. 4-րդ եռամսյակ

				կոճակով և կափույրով շերտակարված վրադիր գրպաններ, գոտի՝ կողքերից էլաստիկ ժապավենով ձգված, կոճկվում է կանաչ 8 կոճակով, ձախ կտրվածքը՝ շերտակարով: ՈՒսադիրների շրջանում տեղադրված են ոսկեգույն կոճակով ամրակներ: Առջևի ձախ գրպանի վերևի մասում ասեղնագործվում են «ՔԿԾ» տառերը՝ քրեակատարողական ծառայության պետի տեղակալների համազգեստին՝ աջ գրպանի վերևի մասում՝ վերջինիս անվան, հայրանվան սկզբնատառերը և ազգանունը:					ք. Երևան, Արշակունյաց 2		
20	18421120/2	Փողկապ	«Դերձակ» ՍՊԸ ՀՀ	Փողկապը սև կիսաբրդյա կտորից է: Օձիքի մասում ունի ռետինե ժապավեն և ամրակ: Վերին կենտրոնական մասում ասեղնագործվում է ոսկեգույն Հայաստանի Հանրապետության զինանշանը:	հատ	792	316800	400	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ ք. Երևան, Արշակունյաց 2	400	2019թ. 4-րդ եռամսյակ
21	18421120/3	Կանացի երկթև բանտ	«Դերձակ» ՍՊԸ ՀՀ	Երկթև բանտը սև կտորից է, թևերը՝ 10 սմ երկարությամբ, 4.5 սմ լայնությամբ, 45 աստիճան բացվածքով: Դիմացի վերին կենտրոնական մասում ասեղնագործվում է ոսկեգույն Հայաստանի Հանրապետության զինանշանը:	հատ	888	150960	170	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ ք. Երևան, Արշակունյաց 2	170	2019թ. 4-րդ եռամսյակ
24	35811190/2	Ուսադիր	«Դերձակ» ՍՊԸ ՀՀ	Ուսադիրները պատրաստվում են կանաչ, սպիտակ կամ ոսկեգույն կիսափափուկ կտորից՝ մահուդե աստառի վրա: ՈՒսադիրներն իրենցից ներկայացնում են ձգված վեցանկյուն՝ երկարավուն, զուգահեռ կողմերով, որի ներքևի վերջնամասն ուղղանկյուն է, իսկ վերևինը վերջանում է ստորին եզրին զուգահեռ բութանկյուն կտրվածքով: Ուսադիրի երկարությունը 110-140 մմ է, լայնությունը՝ 50 մմ: ՈՒսադիրները երկու կամ մեկ կարմիր մակաշերտով են կամ առանց մակաշերտի են: Ուսադիրի հակադարձ կողմից ներքին եզրից, ուսադիրի երկարությամբ ամրանում է ամրացման լեզվակը, որի վերջնամասում արվում է կտրվածքով 5 մմ տրամագծով անցք՝ ուսադիրի ամրացման համար: Ամրացման լեզվակի լայնությունը 2,5	զույգ	540	540000	1000	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ ք. Երևան, Արշակունյաց 2	1000	2019թ. 4-րդ եռամսյակ

				սմ: ՈՒսադիրի հակադարձ կողմից, ներքին եզրից դեպի ներս 3,5 սմ հեռավորության վրա ուսադիրի լայնությամբ մշակված է 2 սմ լայնքով կամրջակ, որի միջով անցնում է ուսադիրի ամրացման լեզվակը: Ամրացման լեզվակը և կամրջակը պետք է լինեն պատրաստված արհեստական կաշվից կամ ամուր կտորից: Ուսադիրների քանակներն, ըստ տեսակի, կտրամադրվի Գնորդի կողմից:							
25	35811190/3	Ուսադիր հանովի	«Դերձակ» ՍՊԸ ՀՀ	Հանովի ուսադիրներն ուղղանկյուն են, զուգահեռ կողմերով, երկարությունը 90 մմ է, լայնությունը՝ 50 մմ, ստորին և վերին եզրերը 2,5 մմ լայնությամբ մուգ կանաչ գույնի ասեղնագործված, որոնք անցկացվում են համազգեստի վրա արդեն կարված ամրակների վրա: ՈՒսադիրները ստորին հատվածում ասեղնագործվում են երկու ոսկեգույն կամ մեկ ոսկեգույն 4 մմ լայնությամբ մակաշերտեր (դաշտայինի դեպքում՝ կանաչ), կամ առանց մակաշերտերի: Ուսադիրները պատրաստվում են կանաչ կամ գունաքողարկված կիսափափուկ կտորից: Ուսադիրների քանակներն, ըստ տեսակի, կտրամադրվի Գնորդի կողմից:	զույգ	318	1272000	4000	ՀՀ ԱՆ ՔԿԾ պահեստ ք. Երևան, Արշակունյաց 2	4000	2019թ. 4-րդ եռամսյակ

Ընդհանուր պայմաններ՝

1. Քրեակատարողական ծառայության խորհրդանշանը կիսաձվաձև է, բարձրությունը՝ 100 մմ, լայնությունը՝ 78 մմ, Վաճառողի կողմից կարվում է բոլոր ձմեռային կիսաբրդյա վերարկուների, ձմեռային գունաքողարկված վերարկուների, կիսաբրդյա կիտելների, կիսբրդյա բաճկոնների, դաշտային բաճկոնների, ձմեռային դաշտային բաճկոնների, տոնական վերնաշապիկների, վերնաշապիկներիի ձախ թևքին՝ ուսակարից 70 մմ ներքև: Խորհրդանշանի վրա պատկերված են ոսկեգույն վահան, թուր, Հայաստանի Հանրապետության զինանշանը, դրոշը և կշեռք: Վահանի վերևում գրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ», իսկ ներքևում՝ «ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» (Նկար 7):

2. Քրեակատարողական ծառայության պետի և տեղակալների (5 ծառայողներ) բոլոր ձմեռային կիսաբրդյա վերարկուների, ձմեռային գունաքողարկված վերարկուների, կիսաբրդյա կիտելների, կիսբրդյա բաճկոնների, դաշտային բաճկոնների, ձմեռային դաշտային բաճկոնների, տոնական վերնաշապիկների, վերնաշապիկների աջ թևքին՝ ուսակարից 70 մմ ներքև, Վաճառողի կողմից կարվում է նաև 100 մմ բարձրությամբ և 78 մմ լայնությամբ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը (Նկար 8):

3. Գնորդի պահանջով հանդերձանքի ընդհանուր քանակի մինչև 10%-ի չափով Վաճառողը պարտավոր է կատարել անհատական չափսերի վերցնում և անհատական կար:

4. Բոլոր ապրանքները պետք է ունենան համապատասխան պիտակավորում և փաթեթավորում: Փաթեթավորման պիտակների վրա պետք է նշված լինեն տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, ամիսը և տարեթիվը: Մատակարարումը և բեռնաթափումը իրականացվելու է աշխատանքային օրերին ժամը 09.30-ից մինչև 17.00-ն մատակարների միջոցներով և հաշվին:

Ծանոթություն՝

1. Հանդերձանքի կարի մեջ օգտագործվող կտորների տեխնիկական բնութագրի համապատասխանությունը ստուգելու նպատակով, Վաճառողը պարտավոր է, իր միջոցների հաշվին, ՀՀ պետական հավաստագիր ունեցող լաբառորատոր հետազոտական կենտրոններից մեկում կտորի նմուշը ենթարկել լաբորատոր փորձարկման և փորձարկման եզրակացությունը ներկայացնել Գնորդին: Բացի դրանից, անհրաժեշտության դեպքում՝ դժգոհությունների և բողոքների առկայության ժամանակ, Գնորդի պահանջով, Վաճառողը պարտավոր է, իր միջոցների հաշվին, մատակարարված ապրանքի խմբաքանակը, ՀՀ պետական հավաստագիր ունեցող լաբառորատոր հետազոտական կենտրոններից մեկում, ենթարկել լաբորատոր փորձարկման՝ ապրանքի որակի և տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը ստուգելու նպատակով:

2. Մինչև ապրանքի մատակարարումն իրականացնելը՝ Վաճառողը պարտավոր է Գնորդի պահանջով համաձայնեցման ներկայացնել մատակարարման ենթակա ապրանքի նմուշները, նմուշը համաձայնեցնելուց հետո Վաճառողին կտրամադրվեն հանդերձանքի չափսերը, որից հետո կմատակարարվեն ապրանքները:

3. Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Քրեակատարողական ծառայողների խորհրդանշանների, թևքանշանների, գլխարկանշանների, օձիքի վրա տեղադրվող տարբերանշանների նկարները՝

Նկար 1.	Նկար 2.	Նկար 3.	Նկար 7.	Նկար 8.

Գլխարկանշանները պատրաստվում են ոսկեգույն մետաղից կամ կանաչ պլաստմասսայից: Վերջինը նախատեսված է դաշտային համազգեստի համար (Նկար 3):

Քրեակատարողական ծառայողների մեծ գլխարկանշանի բարձրությունը 6.5 սմ է, լայնությունը՝ 5.6 սմ (Նկար 1): Պատկերում է քրեակատարողական ծառայության երիզված խորհրդանշանը, ամրացվում է կիսաբրդյա գլխարկի վրա: Փոքր գլխարկանշանի բարձրությունը 4.0 սմ է, լայնությունը՝ 3.5 սմ, պատկերում է քրեակատարողական ծառայության երիզված խորհրդանշանը (Նկար 2), ամրացվում է ականջակալներով ձմեռային գլխարկի, կեպիի, բերետի և պիլոտկայի վրա:

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900011175016
ՀԿՀՀ 02204739

ՔԿ ծառայություն՝
Ա.Ղազարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Դերձակ» ՍՊԸ

ք. Երևան, .Ավան, Քուչակ 16/2,
Հ/Հ 1930048861340100,
«.Կոնվերսբանկ..» ՓԲԸ,
ՀՎՀՀ 00885285,
Հեռ.՝ .010-62-59-11,
E-mail: derzak2013@mail.ru

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 30» « 10 » 2019թ. կնքված
ՀՀ ԱՆ ԲԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/26-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում				
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	ընդամենը
1	18441100/5	Կիսաբրդյա գլխարկ	-	-	-	1971598,8	1971598,8
2	18441100/6	Ականջակալներով ձմեռային գլխարկ՝ բնական կարակուլից	-	-	-	840000	840000
3	18441100/7	Ականջակալներով ձմեռային գլխարկ	-	-	-	1980000	1980000
4	18441140/2	Ձմեռային պիլոտկա՝ բնական կարակուլից	-	-	-	156000	156000
5	18441140/3	Ձմեռային պիլոտկա	-	-	-	300000	300000
6	18441160/1	Կեպի	-	-	-	720000	720000
7	18441140/4	Պիլոտկա	-	-	-	84000	84000
8	18211100/4	Ձմեռային կիսաբրդյա վերարկու, կարակուլե օձիքով	-	-	-	1200000	1200000
9	18211100/5	Ձմեռային կիսաբրդյա վերարկու	-	-	-	7200000	7200000
10	18211100/6	Ձմեռային վերարկու գունաքողարկված	-	-	-	2700000	2700000
11	18231410/1	Կիտել և ազատթող փողքերով տաբատ	-	-	-	7000500	7000500
12	18231210/1	Կիտել և կիսաշրջազգեստ	-	-	-	540000	540000
13	18231910/1	Կիսաբրդյա բաճկոն և ազատթող փողքերով տաբատ	-	-	-	9799996	9799996
14	18221600/8	Դաշտային կոստյում՝ կեպիով, կիսաբամբակյա, գունաքողարկված, անջրանցիկ կտորից	-	-	-	7560000	7560000
15	18221600/9	Ձմեռային դաշտային կոստյում հանովի կարակուլե օձիքով և կայծակաճարմանդով քողարկված գլխանոցով	-	-	-	1080000	1080000
16	18221600/10	Ձմեռային դաշտային կոստյում	-	-	-	1800000	1800000

		հանովի մորթե օձիքով և կայծակաճարմանդով քողարկված գլխանոցով					
17	18211300/2	Թիկնոց- ուսնոց	-	-	-	1776000	1776000
18	18331200/4	Տոնական վերնաշապիկ	-	-	-	1899000	1899000
19	18331200/5	Երկարաթև վերնաշապիկ	-	-	-	3798000	3798000
20	18421120/2	Փողկապ	-	-	-	316800	316800
21	18421120/3	Կանացի երկթև բանտ	-	-	-	150960	150960
24	35811190/2	Ուսադիր	-	-	-	540000	540000
25	35811190/3	Ուսադիր հանովի	-	-	-	1272000	1272000
		Ընդամենը					54 684 854,8

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայություն՝
Ա.Ղազարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Դերձակ» ՍՊԸ
ք. Երևան, .Ավան, Քուչակ 16/2,
Հ/Հ 1930048861340100,
«.Կոնվերսբանկ..» ՓԲԸ,
ՀՎՀՀ 00885285,
Հեռ.՝ 010-62-59-11,
E-mail: derzak2013@mail.ru

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«30» «10» 2019թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/26-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
_____
_____
գտնվելու վայրը _____
հհ _____
_____
հվհհ _____

Պատվիրատու
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
«30» «10» 2019թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/26-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ***Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պետական գնման պայմանագիր***
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2019 թ.
Պայմանագրի համարը՝ *ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/26-1*
Պատվիրատուն և Կատարողը հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2019թ. դուրս գրված № _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը մատուցել է հետևյալ ապրանքները՝

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն